

ԿԱՐՄԻՐ ԲՈՆՈԿԻ ԳԼԵԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՅԵՎ
ՆՈԽԱԿՈՉՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐՈՍՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ծ Բ Ա Գ Ի Բ

ՎՈԶ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑՆԵՐԻ 5, 6 ՅԵՎ 7 ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ
ՊԱՏՐՈՍՏՈՒԹՅԱՆ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

355.2
Ծ - 98

Լ Ա Բ Ա Ր Ա Տ

Ե Ր Ե Վ Ա Ն

1940

1 MAR 2010
100

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԳԼԵՎԱՐՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՑԵՎ
ՆԱԽԱԿՈՉՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

355.2
5-98

ԾՐԱԳԻՐ

ՎՈԶ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑՆԵՐԻ 5, 6 ՅԵՎ 7 ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

LOKUSRAS
ԵՐԵՎԱՆ

1940


15 MAY 2013

91/121

«Կանոնավորապես դրված սկզբական և նախակոչյան պատրաստությունն այնպիսի դեր կլսագամեր յերկրի պաշտպանության համար, վորփ նշանակությունը դժվար է գերազահատել։ Մեր ապագան ռազմիկները հնարավորություն կատանան ծանոթանալու մեր կարմիր բանակի մարտական տրադիցիաների և զինվորական կարգապահության հիմնական սկզբունքների հետ։ Գեղատիմերը և պատաժիմերը կուլորն ռազմական շարքը, հրաձգույթին գործը, կիմանան հակառաջին և հակաբիմանական պաշտպանության կանոնները և, վոր գլուխորմ և, կառանան լավ ֆիզիկական ժարդածություն և կոփվածություն։

Անող սերունդը սկզբանական ռազմական պատրաստությունից կժաղկ այն բարոյական և ֆիզիկական հատկությունները, վորոնք անհաժեշտ են Կարմիր բանակի մարտիկներ սպցիալիզմի և մեր հայրենիքի համար մրկելիիք ապագա մարտերում։

(Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Արտակարգ IV սեսիայում տվյալ զեկուցումից)։



(19796
48
3341)



20814-59

Հ Ր Ա Մ Ա Ն
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈ-
ՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

№ 50

7 ՄԱՐՏԻ 1940 թվի
Ք. ՄՈՍԿՎԱ

1. Գործողության մեջ մտցնել վոչ լրիվ միշնակարգ և միշ-
նակարգ դպրոցների 5, 6 և 7 դասարանների սովորողների սկզբնա-
կան ուսումնական պատրաստության ծրագիրը:

2. Սովորողների սկզբնական ուսումնական պատրաստության
ծրագրով ղեկավարվել այն վոչ լրիվ միշնակարգ և միշնակարգ
դպրոցների բոլոր դիրեկտորներին և ուսումնական ղեկավարներին,
վորտեղ, բնդիանուր զինվորական պատրականության մասին ո-
րենքի համաձայն, սահմանված և սովորողների սկզբնական ուսու-
մնական պատրաստությունը:

ԽՍՀՄ Պաշտպանության ժողովրդական Կոմիսար
Խորհրդային Միության Մարշալ Կ. ՎՈՐՈՇԼՈՎ

«Հաստառում եմ»
ԽՍՀ Միուրյան Պաշտպանության
Ժողովրդական Կոմիտար
Խորհրդային Միուրյան Մարշալ
Կ. ՎՈՐՈՇԼՈՎ,

7 մարտի 1940 թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Սովորող յերիտասարդության սկզբնական ուազմական պատրաստությունը նպատակ ունի:

ա) սովորողներին հասկացողություն տալ Կարմիր բանակի և Ռազմա-Ծովային Նավատօրմի խնդիրների և Համեր(Բ)Պունդատաջնորդների լենինի և Ստալինի դերի մասին ԽՍՀՄ-ի գինվածուժերի շինարարության և Կարմիր բանակի հաղթությունների կազմակերպման գործում:

բ) ծանոթացնել սովորողներին լեգենդար զորավարների՝ Կարմիր բանակի հերոսների հետ ընկերներ Վորոշիլովի, Ֆրունզեի, Տիմոշենկոյի, Բուլյոննու և այլոց մարտական գործունեյության որինակներով:

գ) սովորողներին տալ տարրական գիտելիքներ և սկզբնական ունակություններ ֆիզիկական պատրաստության, ռազմական շարքի, հրաձգային գործի, ռազմական տեղագրության և ՀՈՔՊ-ի վերաբերյալ:

Սկզբնական ռազմական պատրաստության ծրագիրը միասնական է հանդիսանում արական և իգական սեռի սովորողների համար: Բացառություն է կազմում շարային պատրաստությունը մաքետ-հրացաններով, վորն անցնում էն 7-րդ դասարանում միայն արական սեռի սովորողները:

2. Սկզբնական ռազմական պատրաստության ուսումնական պլանը (Հավելված № 1) կազմում է ռազմական զեկավարը և հաստատում է դպրոցի դիրեկտորը: Սկզբնական ռազմական պատրաստության ուսումնական պլանը հանդիսանում է դպրոցի ընդհանուր ուսումնական պլանի անբաժանելի բաղադրիչ մասը: Ռազմական զեկավարը, յենելով դպրոցի կոնկրետ պայման-

ներից, ուսումնական պլանը ժամանակի նկատմամբ կապակցում է դպրոցի ծրագրի մյուս հարակից առարկաներն անցնելու հետ (որինակ՝ ուղմական տեղադրությունը աշխարհագրության հետ և այն), սակայն, չսահմանելով առարկաներն անցնելու պլանով նախատեսնված հաջորդականությունը:

3. Սկզբնական ուղմական պատրաստության վիճակի համար դպրոցի դիրեկտորը պատասխանատվություն է կրում նույն շափով, ինչ շափով վոր դպրոցում անցնելիք մնացած առարկաների համար:

Ռազմական դեկավարը՝ կազմակերպում է, անցկացնում և անմիջականորեն պատասխանատու յև յուրաքանչյուր սովորով ուղմական պատրաստության և ֆիզիկական դաստիարակության համար:

Դիրեկտորի և ուղմական դեկավարի ամենագլխավոր խընդիրներից մեկն և Հանդիսանում դպրոցի ապահովումը անհրաժեշտ ուսումնական պիտույքներով, պրիբորներով և այլ ուսումնական գույքով տարեկի համաձայն: (Հավելված № 2):

4. Տկրնական ուղմական պատրաստության վերաբերյալ առաջադիմության հաշվառումը կատարվում է մյուս առարկաների հետ ընդհանուր հիմունքներով:

Տարվա յուրաքանչյուր քառորդի ընթացքում առաջադիմության արդյունքները մտցվում են ընդհանուր տարեկների մեջ: Ռազմական պատրաստության վերաբերյալ առաջադիմության ընդհանուր գնահատականը դուրս է բերվում վորպես միջինը սկզբնական ուղմական պատրաստության բոլոր առարկաների գնահատականներից:

Սկզբնական ուղմական պատրաստության ստուգումները կատարվում են յուրաքանչյուր դաստիարակության մեջ: Ստուգումների արդյունքները մտցվում են առաջադիմության ընդհանուր տարեկների մեջ:

Տկրնական ուղմական պատրաստությունն անցնող սովորողները յենթարկվում են ստուգման մյուս դիսցիպլինների հետ հավասար ծրագրի հետեւյալ հատվածներից, նարմիր բանակը և Ռազմա-Ծովային նավարողը. համառոտ տեղեկություններ կարմիր բանակի կազմակերպության մասին, ուղմական տեղադրություններ ՀՈԹՊ:

Ստուգում շտված սովորողները շեն կարող փոխադրվել ՀԵ-առելլալ դաստիարակության:

5. Սովորողների սկզբնական ուղմական պատրաստությունը անցնելու համար, ընդհանուր վիճակության պարագանության մասին որենքի համաձայն (Որենքի 76 հոդվածը), հատկացվում է շաբաթը յերկու ժամ: Թացի այդ, սկզբնական ուղմական պատրաստության ծրագրին անցնելու համար ոգտագործվում է այն ժամանակը, վոր լուսադոկումատների ծրագրերով հատկացվում է սովորողների ֆիզիկական դաստիարակության համար՝ շաբաթը մեկ ժամ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺԱՄԿԵՐԻ ՀԱՇՎԱՐՔԸ

Առարկաների անունները	5			6			7			Հնդամենը ուսումնական ժամեր
	դասա- րան									
1. Կարմիր բանակի և Ռազմա-Ծովային նավատորմը	10	10	6				26			
2. Համառոտ տեղեկություններ Կարմիր բանակի կազմակերպության մասին			4				4			
3. Ֆիզիկական դաստիարակության և շարային պատրաստություն	85	80	80				245			
4. Հրածգային պատրաստություն		20	20				40			
5. Ռազմական տեղագրություն	10	10	10				30			
6. ՀՈԹՊ	15	—	—				15			
Հնդամենը	120	120	120				360			

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Ֆիզիկական դաստիարակության և շաբաթին պատրաստության ժամերի քանակի մեջ մտցված է այն ժամանակը, վորք լուսադոկումատների ծրագրերով հատկացվում է ֆիզիկական դաստիարակությանը՝ շաբաթը մեկ ժամ:

2. Ռազմական դիսցիպլինների ուսումնական ժամերի հաշվարկը պարտադիր է և փոփոխման յենթակա չե:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՅԵՎ ՌԱԶՄԱ-ՇՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. «Կարմիր բանակը և Ռազմա-Շովային նավատորմը» հատվածը խնդիր է դնում՝ սովորողների մեջ սեր դաստիարակել դեպի Կարմիր բանակը և Ռազմա-Շովային նավատորմը, փոխանցել նրանց Կարմիր բանակի մարտական տրագիցաները, նրանց մեջ դաստիարակել հերոսություն և անսահման նվիրվածություն Սոցիալիստական Հայրենիքին և մեծ Ստալինին:

2. Դեկավարը պետք է սովորողների համար մատչելի ձևով, վառ գրավիչ պատմվածքի միջոցով շարադրի լենինի և Ստալինի՝ սոցիալիստական հեղափոխության մեծ ստրատեգների գերը Կարմիր բանակն ստեղծելու գործում քաղաքացիական պատերազմի տարրիներին, խաղաղ շինարարության տարրիներին, ճապոնական հափշտակիչների ջախջախման գործում, լեհական պաների հնչուապայքարական ժողովուրդների ազատագրման համար մղած պայքարում և ֆիննական սպիտակ գվարդիականության դեմ մղած պայքարում:

3. Այս հատվածի դասավանդումը պետք է սերտորեն կապահպան լինի և ԽՍՀՄ պատմության, ԽՍՀՄ Սահմանադրության նույնական և սկզբանական ուղղմական պատրաստության բոլոր հատվածների հետ:

4. Դեկավարը պետք է գործադրի ուղղմա-պատմական թանգարանների, կինոների, ցուցահանդեսների համախումը, հանձնարարի սովորողներին համապատասխան գեղարվեստական գործականություն կարգալ և կազմակերպի սովորողների հանդիպումը կարմիր բանակայինների, պետկազմի հետ, քաղաքացիական պատերազմի մասնակիցների, Խորհրդային Միության հերոսների և շքանշանակիրների հետ:

5. Հանձնարարվող գրականության ցուցակը մոտավոր է հանդիսանում: Դեկավարը պետք է մշտակես հետևի նոր գրականու-

թանը և պարբերական մամուլին, ինքն ուսումնասիրի այն և հանձնարարի սովորողներին այն գրքերը, վորոնք ցույց են տալիս մեր հայրենիքի հերոսական անցյալը և ներկան, քաղաքացիական պատերազմի հերոսականությունը, լենինի և Ստալինի, ժողովրդական հերոսների և պրոլետարական զորավարների կյանքը և գործունելությունը:

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՐՈՒ (10 ՃԱՄ)

Թ ե մ ա 1: Ինչի՞ համար է հարկավոր սկզբնական ուղղմական պատրաստությունը (1 Ժամ)

1-ԻՆ ԴԱՍ

ԽՍՀՄ պաշտպանության նշանակությունը կապիտալիստական շրջապատման պայմաններում: Մարտական բարդ տեխնիկային տիրապետելու անհրաժեշտությունը: Ռազմական գործին կատարելապես տիրապետող ԽՍՀՄ քաղաքացիների պատրաստությունը:

Թ ե մ ա 2: Լենինը և Ստալինը՝ Կարմիր բանակի և նրա հաղբանակների առաջնորդները և կազմակերպիչները (3 Ժամ)

2-ՐԴ ԴԱՍ

Պրոլետարիատի զինված ուժերը 1905—1907 թ. թ. հեղափոխության ժամանակ: Լենինը և Ստալինը՝ բանվորական մարտական դրուժինաների և ցարական բանակում ու նավատօրմում հեղափոխական բշխների կազմակերպիչները: Ընկերներ Ֆրունզեի և Վորոշիլովի գերը բանվորական մարտական դրուժինաների ստեղծման գործում: Ապատամբությունը «Պուլումկին» զրահակրի վրա, նավաստիների ապատամբությունը Սեվաստոպոլում, Կըրոնցտագում և Սվեաբորգում:

3-ՐԴ ԴԱՍ

Ցարական ինքնակալության տապալումը զինված բանվորների և զինվորների կողմից բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ 1917 թ. փետրվարին: Կարմիր գվարդիայի կազմակերպումը 1917 թվին: Բոլշևիկյան զինվորական կազմակերպություն-

ների ստեղծումը բանակում և նավատությունում: Բորժուազիայի տապալումը 1917 թ. Հոկտեմբերին Կարմիր գվարդիայի, Հեղափոխական գինվորների և նավաստիների կողմից, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ, վորի գլուխն էյին կանգնած էնինը և Ստալինը:

4-րդ դաս

1918 թվի հունվարի 28-ի դեկտեմբեր Կարմիր բանակի ստեղծման մասին; 1918 թվի փետրվարի 12-ի դեկտեմբեր Կարմիր նավատորմի ստեղծման մասին: Կարմիր բանակի և Ռազմա-Շովային նավատորմի նպատակները և խնդիրները; 1918 թ. փետրվարի 23-ը Կարմիր բանակի մարտական ծննդի որն եւ: Կարմիր գվարդիայից կանոնավոր Կարմիր բանակի, կամավորականությունից պարտադիր զինվորական ծառայության անցնելը: Աշխատավորների պարտադիր զինապարտության մասին դեկտեմբեր:

«Մենք վորոշել ենինք գարնանն ունենալ 1.000.000 մարդուց բաղկացած բանակ, այժմ մեզ Հարկավոր և յերեք միլիոն մարդուց բաղկացած բանակ: Մենք կարող ենք ունենալ այն և մենք կոնենանք այն» (Էնին, Յերկ., Հատ. XXIII, էջ 217):

Թեմա 3: Կարմիր բանակի հաղբանակները բաղադրիչական պատերազմի և ինտերվենցիայի սկզբում (6 ժամ)

5-րդ դաս

Ինչու ոտարերկրյա իմպերիալիստները Հարձակվեցին մեր Հայրենիքի վրա Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունից հետո: Խուսական և միջազգային հակահեղափոխության համաձայնությունը խորհրդացին խօսանության դեմ:

6-րդ դաս

Խորհրդացին Հողերի ժամանակավոր զավթումը գերմանացիների կողմից: Խուսական, ուկրաինական, բելոռուսական բանվորների և գյուղացիների հերոսական պայքարն ոկուպանտների դեմ?

7-րդ դաս

Լուգանսկի մետալիստ-բանվորների և Դոնեցի հանքափոր-

ների արշավն ընկեր Վորոշիլովի գլխավորությամբ: Ընկեր Վորոշիլովի մարտական հեղափոխական ուղին:

8-րդ դաս

Կարմիր բանակի պայքարն անգլիական ինտերվնտների դեմ Հյուսիսում, չեխո-սլովակյան և ուստական սպիտակ գվարդիական խոռվարաբների դեմ Սիբիրում և Ճապոնական հափշտակիշների դեմ Հեռավոր Արևելքում:

9-րդ դաս

Յարիցինի (Ստալինգրադի) պաշտպանությունն ընկեր Ստալինի զեկավարությամբ 1918 թվին: Ընկեր Վորոշիլովի գերը Յարիցինի պաշտպանության գործում:

10-րդ դաս

Բանվորների և գյուղացիների պայքարը Ուկրաինան և Բելոռուսիան գերմանական հափշտակիշներից ազատագրելու համար 1918 թ. վերջին: Ժողովրդական հերոս Շորսը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՐ

1 թեմայի համար

Ընկ. Խվանովի նամակը և ընկեր Ստալինի պատասխանը: Պարտզատ 1938 թ. էջ 16:

Ստալին ի. Վ., Զեկուցում կուսակցության XVIII համագումարում Համկար(բ)կ Կենտկոմի աշխատանքի մասին:

Մոլոտով Վ. Մ., Հոկտեմբերյան հեղափոխության XXII տարեդարձը, Գոսոլիտզատ, 1939 թ:

Վորոշիլով Կ. Յե., Ճամկարությունը Համագումարում արտասահմած:

Վորոշիլով Կ. Յե., Ընդհանուր զինվորական պարտականության մասին որենքի նախագծի մասին: Յօնիզատ, 1939 թ.:

ԽՍՀՄ Սահմանադրությունը, Հոդ. 132 և 133:

2 և 3 թեմաների համար

Համկար(բ)կ պատմության համառոտ դասընթաց, վուխներ III, VII, VIII:

Ընկեր Ստալինի համառոտ զենսագրությունը:

Ըենին և Ստալին, ՀամԿ(բ)Կ պատմությունն ուսումնասիրեկու ժողովածու, Հատ. II, Հատված՝ Կուսակցությունը քաղաքացիական պատերազմի և ռազմական կոմունիզմի շրջանում, Պարտիզատ, 1937 թ., էջեր՝ 164—336:

Վորոշիլով Կ. ՅԵ., Ստալինը և Կարմիր բանակը: Յօնիզատ, 1939 թ.:

Վորոշիլով Կ. ՅԵ., Ստալինը և Կարմիր բանակի շինարարությունը. Յօնիզատ, 1939 թ., էջ 16:

Կ. ՅԵ. Վորոշիլովի կենսագրությունը:

Պատմական-հեղափոխական որացուց 1939 թվի կամ «Սոցիալիզմի յերկիրը» որացուց 1940 թ. համար:

ԽՄՀՄ-ում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի հերոսներ՝ Զապահեվ, Շչորս, Լազո, Կոտովսկի, Ֆարբիցիուս, Պարխոմենկո, Ռուդնեվ, Դումիչ: Յօնիզատ, 1938 թ. 144 էջ (Կարմիր բանակայինի գրադարան):

Տոլսոտյ Ա., Հաց (Յարհցինի պաշտպանությունը):

Ոստրովսկի Ն., Ինչպե՞ս եր կոփվում պողպատը, Դետիզատ-ի Հրատ.:

6-րդ ԴԱՍԱՐԱՆ (10 ԺԱՄ)

Թեմա. Կարմիր բանակի կողմից սպիտակ զվարդիականների և ինտերվենտների ջախչախումը (10 ժամ)

1-ին դաս
Ինտերվենցիայի ուժեղացումը 1918 թվի վերջին: Խորհրդային յերկրի շրջափակումը: Կոլչակի արշավը: Լենինը և Ստալինը՝ Կոլչակի ջախչախման կազմակերպիչները:

2-րդ դաս

Էնկերներ Ֆրունզեյի և Կույբիշևի դերը՝ Կոլչակի ջախչախման գործում: Բնկ. Ֆրունզեյի մարտական հեղափոխական ուղին: Ժողովրդական հերոս Զապայեվը և մարտական կոմիսար Ֆուրմանովը:

3-րդ դաս

Պետրոգրադի (Լենինգրադի) պաշտպանությունը: Յուդենշիբ ջախչախումը: Լենինի և Ստալինի դերը՝ Յուդենիշիբի ջախչախման գործում:

4-րդ դաս

Դենիկինի ջախչախումը ընկեր Ստալինի ղեկավարությամբ: Առաջին Հեծյալ բանակի կազմակերպումն ընկեր Ստալինի կողմից: Առաջին Հեծյալ բանակի հերոսները՝ Վորոշիլովը, Բուլգոնինին, Շլադենկոն, Կուլիկը, Տիմոշենկոն, Պարխոմենկոն, Դումիչը:

5-րդ դաս

Աստրախանի պաշտպանությունը և բնկ. Կիրովի դերը՝ Աստրախանի պաշտպանության գործում: Բնկ. Կիրովի մարտական հեղափոխական ուղին:

6-րդ դաս

Լեհական պաների հարձակումը՝ խորհրդային յերկրի վրա 1920 թվին: Լենինը և Ստալինը՝ պանական լեհաստանի դեմ տարած հաղթանակների կազմակերպիչները: Առաջին Հեծյալ բանակի դերը՝ սպիտակ լեհերի դեմ տարած հաղթանակում:

7-րդ դաս

Վրանգելի դեմ մղած պայքարը: Բնկեր Ստալինը՝ Հարավային ֆրոնտում: Փերեկոպի գրավումը: Վրանգելի ջախչախումը: Բնկ. Ֆրունզեյի դերը՝ Վրանգելի ջախչախման գործում:

8-րդ դաս

Միջին Ասիայի ազատագրումը: Բնկերներ Ֆրունզեյի և Կույրիշեկի դերը՝ Միջին Ասիայի ազատագրման գործում: Ազրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ազատագրումը: Բնկ. Որջոնիկիձեյի մարտական հեղափոխական ուղին:

9-րդ դաս

Ճապոնական ինտերվենցիայի լիկիդացիան Հեռավոր Արևելքում: Բնկ. Լազոյի դերը՝ ճապոնական ինտերվենտների դեմ մղած պայքարում:

10-րդ դաս

Ինչու Կարմիր բանակը և Բազմա-Ծովային նավատորմը Հաղթեցին բոլոր թշնամիներին: Բնկեր Ստալինը՝ Կարմիր բանակի յերեք առանձնահատկությունների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմության համառոտ գասընթաց:

Լենին Վ. Ի., ԾԿ(բ)Կ Կենտկոմի թեղիսները Արևելյան ֆրոնտի գրության կապակցությամբ, Յերկեր, Հատ. XXIV, Եջեր՝ 224—226

Լենին Վ. Ի., Բանվորներին և գյուղացիներին ուղղված նամակը Կոլակի դեմ տարած հաղթանակի առթիվ, Յերկեր, Հատ. XXIV, Եջեր՝ 431—436:

Լենին Վ. Ի., Բոլորը Դենիկինի դեմ պայքարի, Գուլունիզգությամբ, 1939 թ.:

Լենին Վ. Ի., Ռէկրաֆինայի բանվորներին և գյուղացիներին ուղղված նամակը Դենիկինի դեմ տարած հաղթանակների առթիվ, Յերկեր, Հատ. XXIV, Եջեր՝ 655—660:

Լենին Վ. Ի., ԾԿ(բ)Կ IX համագումարը, Կենտրոնական Կոմիտեի գեկուցումը 29. մարտի, Յերկեր, Հատ. XXIV, Եջեր՝ 94—102:

Ստալին Ի. Վ., Կարմիր բանակի յերեք առանձնահատկությունների մասին:

Լենին և Ստալին, ՀամԿ(բ)Կ պատմությունն ուսումնասիրելու յերկերի ժողովածու, Հատ. II, Հոգվածներ՝ «Հարավում ուղղմական գրության մասին» և «Անտանտայի նոր արշավը Ռուսաստանի վրա»:

Վ. Պ. Ռ. Պ. Վ. Յ. Յ. Հ. Ս. Ստալինը և Կարմիր բանակը:

Վ. Պ. Ռ. Պ. Վ. Յ. Յ. Հ. Ս. Ստալինը և Կարմիր բանակի շինարարությունը: Յանձնական 1939 թ., էջ 16:

Շադենեկո Յ. Ս., Ստալինը և Ստալին Հեծյալը: «Կրաքանչ աշխարհական պատճեն» թերթը, 19.XI 1939 թ. № 265:

Բուրգոն Յ. Ս., Կարմիր հեծելազորը քաղաքացիական պատերազմում: «Պարագաներ», 18.XI 1939 թ.:

Միհայլ Վասիլևիչ Ֆրունզե, Յանձնական 1938 թ., էջ 48:

Սերգեյ Միրոնովիչ Կիրով. Համառոտ կենսագրական ուրագիծ, Գուլունիզգությամբ, 1939 թ.:

Բերյոզ Վոլոդիմեր Համառոտ կենսագրական ուրագիծ: Յանձնական 1938 թ. 103 էջ: (Համառոտ կենսագրական ուրագիծ Վոլոդիմեր Համառոտ մարտերում), «Քաղաքացիական պատերազմի ֆրոնտներում»:

Ուշանիկի ձեռքին: Եղեր Սերգո Որջոնիկի մասին հուշերից, Գուլունիզգությամբ, 1939 թ., էջ 167:

Բուրգենս, Զապայեվ. Յանձնական 1938 թ. (Կարմիր բանակայինի գրադարան):

Գերասիմ Յ. Վ. և Եղիշե Մ. Շ. Շոլուման Տղումանը: Գուլունիզգությամբ, 1939 թ. 235 էջ:

ԽՍՀՄ-ում քաղաքացիական պատերազմի հերոսները՝ Զապայեվ, Շոլուման և այլն կույտներ, Դանիլով, Վարդիսիսուս, Պարիսումենկո, Ռուդովիչ, Դունդիչ: Յանձնական 1938 թ. 144 էջ (Կարմիր բանակայինի գրադարան):

Լազոն Ո., Սերգեյ Լազոյի մարտական ուղին: Գուլունիզգությամբ, 1938 թ., 56 էջ:

Ֆյունգով Ա., Պերմի կատաստրոֆան և Արևելյան քաղաքացիությամբ: Յանձնական 1939 թ., 192 էջ:

Խեմին Ա., Յուղենիչի վրա: Յանձնական 1939 թ. 79 էջ (Կարմիր բանակայինի գրադարան):

Պավել Ենկոն Պ. և Տեսս Տ., Կոլակի զախախումը: Յանձնական 1939 թ., էջ 48 (Կարմիր բանակայինի գրադարան):

Մելիկով Վ., Դենիկինի զախախումը Ստալինյան պլանը: Յանձնական 1938 թ., 30 էջ:

Լենինի դոկտոր Ո., Առաջին Հեծյալը (Ուրվագծեր Կարմիր հեծելազորի պատմությունից): Յանձնական 1939 թ., 102 էջ (Կարմիր բանակայինի գրադարան):

Գուրգովի կով Ո., Առաջին Հեծյալի շարքերում: Կարմիր բանակայինի պատմվածքներ: Յանձնական 1939 թ., 118 էջ:

Անանյեվ Վ., Կախովկա: (Վրանգելի զախախումը 1920 թվականից): Յանձնական 1939 թ., 64 էջ:

7-ՐԴ ԴԱՍԱՐԱԿ (6 ժամ)

Քեմա 1. Կարմիր բանակը և Մազմա-Շովային նավատորմը՝ ԽՍՀՄ-ի սահմանների պահպանները (3 ժամ)

1-ԻՆ ԴԱՍ

ԽՍՀՄ կապիտալիստական շրջապատման մեջ և Կարմիր բանակի ու Մազմա-Շովային նավատորմի խնդիրները: Սոցիալիզմի յերկրի բանակը հզոր ուժ է:



2-ՐԴ ՅԵՎ 3-ՐԴ ԴԱՍԵՐԸ

Կարմիր բանակի հերոսությունը ճապոնական հափշտակիչների դեմ և ասան լճի մոտ և Խալխին-Գոլի մոտ մղած մարտերում, պանական ճնշումից Արևմտյան Ռվապահնայի և Արևմտյան թելուսիայի ազատագրման համար մղած մարտերում ու ֆինական սպիտակ գվարդիականության դեմ մղած պատերազմում (որինակներով ցույց տալ մարտիկների, հրամանատարների և կոմիսարների քաջարիությունը և հերոսությունը):

Թ Ե մ ա 2: Ընդհանուր զինվորական պարտականության մասին որենքը (2 ժամ)

4-ՐԴ ԴԱՍ

Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազն պարտքն եւ: Հայրենիքին դավաճանելն ամենածանր հանցանք եւ: Խորհրդային հետախուզության պայքարը լըրտեսների, դիվերսանտների, ժողովրդի թշնամիների դեմ: Հեղափոխական զգոնության անհրաժեշտությունը:

5-ՐԴ ԴԱՍ

Կարմիր բանակ և Ռազմա-Շովային նավատորմ կանչելու կարգը: Շառայության ժամկետները Կարմիր Բանակում և Ռազմա-Շովային նավատորմում:

Թ Ե մ ա 3: Հասարակական կազմակերպությունները և յերիտասարդության խնդիրները յերկրի պաշտպանության ամրապնդման գործում (1 ժամ)

6-ՐԴ ԴԱՍ

Լենինյան-Ստալինյան Կոմունիստական Յերիտասարդության Միությունը և նրա դերը յերկրի պաշտպանումակության ամրապնդման գործում: Պաշավիաքիմը, Ռուսաստանի Կարմիր Խաչի ընկերությունը և ֆիզկուլտուրային ընկերությունները մասսայական պաշտպանական կազմակերպություններ են: Խորհրդային յերիտասարդության խնդիրներն այդ կազմակերպություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 քեմայի համար

Ստալին Ի. Վ., Հաշվետու զեկուցում Համկ(բ)Կ ԽVIII համագումարում Համկ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին:

Բնկ. Իվանովի նամակը և ընկեր Ստալինի պատասխանը:
Պարտզատ, 1938 թ., եջ 16:

Մոլոտով Վ. Ա., Հոկտեմբերյան հեղափոխության XXII տարեդարձը: Հատված I—«Կապիտալիզմի ուղիները և Խորհրդային Միությունը»: Գօսոլոնտիզատ, 1939 թ.:

Մոլոտով Վ. Ա., Զեկուցում կառավարության արտաքին քաղաքականության մասին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի VI սեսիայում:

Վորոշիլով Կ. ՅԵ., Ստալինը և Կարմիր բանակի շինարարությունը: Յօնիզատ, 1939 թ., եջ 16:

Վորոշիլով Կ. ՅԵ., Ընդհանուր զինվորական պարտականության մասին որենքի նախագծի մասին: Յօնիզատ, 1939 թ.:

Վորոշիլով Կ. ՅԵ., Կարմիր Բանակը սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության գործում: Յօնիզատ, 1939 թ., եջ 87:

Մելիկս Լ. Զ., Ճառ Համկ(բ)Կ ԽVIII համագումարում: Յօնիզատ, 1939 թ., եջ 48:

Խորհրդային Հայրենասիրության փաստաթղթեր: (Խասան լճի մոտ տեղի ունեցած մարտերի որերին): Յօնիզատ, 1939 թ., եջ 95:

Մոշչյակ Ի., Կոմունիստի տեղը մարտում: Ժուրնալ «Կուսական աշխատանքը ԲԳԿԲ, ուս» («Պարտության աշխատանքը ԲԳԿԲ, ուս») 1939 թ., № 15, եջ՝ 13—18:

Մարտական միջադեպեր: Հողվածների և նյութերի ժողովածու խասան լճի մոտ տեղի ունեցած դեպքերի մասին: Յօնիզատ, 1939 թ., եջ 192:

2 և 3 քեմաների համար

Ստալին Ի. Վ., Կուսակցական աշխատանքի թէրությունների և տրոցկիստական և այլ յերկերեսանիների լիկիդացիայի միջոցների մասին: Պարտզատ, 1937 թ.:

ԽՍՀՄ Սահմանադրությունը (Հիմնական Որենքը), Հոդ.

132—133:

Համկ(բ)ՅԵՄ ծրագիրը և կանոնադրությունը:

Բրենք բնդհանուր զինվորական պարտականության մասին: Յօնիզատ, 1939 թ.:

Զինվորական յերդում: Հանդիսավոր և յերդումնավոր պարտավորություն (ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրեր): Յօնիզատ, 1939 թ., էջ 16:

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի . զինվորական յերդումը: Յօնիզատ, 1939 թ., 16 էջ:

ԽՍՀՄ ԿԳԿ 1934 թ. հունիսի 8 վորոշումը.— Հայրենիքին դավաճանելու համար պատժի մասին:

ԲԳԿԲ ներքին Շառայության Կանոնագիրը (ԵՎԸ— 37): Յօնիզատ, 1938 թ., գլուխ I, Հատված I: Զինվորական ծառայողների ընդհանուր պարտականությունները:

ԲԳԿԲ Հետևակի մարտական կանոնագիրը (ԵՎՊ— 38):

Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀ Միության քաղաքացու սրբազն պարտքն ե: Յօնիզատ, 1939 թ.:

Ո գ ի ն ն., Ընդհանուր զինվորական պարտականությունն որենք ե: «Կրասնայա Զենզու» թերթ, 8. IX. 1939 թ.:

Մարկովին ն., Պաշավիաքիմը Կարմիր բանակի և նախատորմի հզոր ռեզերվն ե: «Օօօանահամ» հրատարակչություն, 1939 թ.:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԳԿԲ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՐԱՆ (4 ժամ)

Թ ե մ ա: ԽՍՀՄ-ի զինված ուժերը

1-ԻՆ ԴԱՍ

Կարմիր բանակը: Ռազմա-Ծովային նախատորմը: Սահմանապահ և ներքին զորքերը:

2-ՐԴ ԴԱՍ

Կարմիր բանակի բաժանումը զորքերի տեսակների, Հետևակի, հեծելազոր, Հրետանի, զրահատանկային զորքեր, ռազմա-ռդային ուժեր, ճարտարագիտական և քիմիական զորքեր, կապի զորքեր և այլն:

3-ՐԴ ԴԱՍ

Ավիացիայի տեսակները. կործանիչ, հեռու ոմբակոծող, մո-

տիկ ոմբակոծող, գրոհային, հետախուզակ, զորական և հատուկ նշանակում ունեցող:

4-ՐԴ ԴԱՍ

Ռազմա-ծովային ուժերի կազմը. մարտական նավեր և ոժանդակ նավեր, Մարտական նավերի ամենագլխավոր դասերը (խմբերը). գծանավեր, զրահակիրներ, հածանավեր, ականակիրներ, տորպետային կատերներ, սուզանավեր, մոնիթորներ, Հրետանավեր և ավիակիրներ: Ծովային ավիացիա և դիրիժարլեռներ: Առափնյա պաշտպանություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Որենք ընդհանուր զինվորական պարտականության մասին: ԲԳԿԲ դաշտային կանոնագիրը (ՊՍ— 36):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

1. Ֆիզիկական դաստիարակությունը շարային պատրաստության գուգակցությամբ նպատակ ունի.

ա) պապօվել սովորողների աճող որգանիզմի բազմակողմանի ֆիզիկական գարգացումը, կազմավորումը, ամրացումը և կոփումը.

բ) դաստիարակել սովորողների ֆիզիկական և բարոյական-կամացին հատկությունները՝ ճարպկություն, համարձակություն, արագություն, տոկունություն, կոլեկտիվիզմ, փոխադարձ ոգնության զգացմունք, կարգապահություն.

գ) պատվաստել սովորողներին գործնական ունակություններ շարային պատրաստության վերաբերյալ, Հետևակի շարային կանոնագործ պահանջներին համապատասխան.

դ) պապօվել սովորողների համար սպորտի զանազան տեսակների տեխնիկային տիրապետելը և կատարելագործվելը դրանցից մեկի մեջ, նայած յուրաքանչյուր սովորողի ֆիզիկական տվյալներին:

2. Ֆիզիկական դաստիարակության ծրագիրը կառուցված ե-

ՊԱՊ-ի կոմպլեքսի հիման վրա և պետք է ապահովի վուլով միջնակարգ և միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանն ավարտած սովորողների համար ՅԵՊԱՊ-ի կրծքանշանի նորմաները հանձնելու պատրաստությունը:

3. Սովորողների ֆիզիկական դաստիարակությունն անց ե կացվում բժշկի պարտադիր մասնակցությամբ, վորո պատասխանառություն և կրում ֆիզիկական կուլտուրայի պարագամունքների ճիշտ նշանակելու համար յուրաքանչյուր սովորողի առողջության վիճակին համապատասխան:

Բժիշկը պարտավոր ե՝ յուրաքանչյուր սովորողի ֆիզիկական զարգացման սիստեմատիկ դիտողություն կատարել, անպայմանորեն անցկացնել ամեն տարի սովորողների ընդհանուր բժշկական քննություն՝ դպրոցում պարագամունքներն սկսելուց առաջ և մրցակցությունների մասնակիցների բժշկական քննությունը (մրցակցություններից 3 որ առաջ):

4. Քայլքը դահուկներով և լողն ուսումնասիրվում են այնտեղ, վորտեղ դրա համար համապատասխան պայմաններ կան: Դահուկային պատրաստությունը և լողն անցկացնելու դեպքում թույլ ե տրվում շմշակել վարժությունները մարմնամարզական բործիքների վրա:

5. Դասն անցկացնելու ժամանակ ուղղմական դեկավարը (ֆիզկուլտուրայի դասատուն) պետք է պահպանի հետևյալ մուտավոր սխեման:

Դասի առաջին — ներածական մասը (7—10 րոպե), պարապողների կազմակերպումը և նրանց մոտ կայտառ տրամադրություն ստեղծելը: Միջոցները՝ շարային վարժություններ, բայլք, վազք:

ՅԵՐԿՐՈՐԴ — ընդհանուրը նախապատրաստական պարագացում և իր շարժումներին տիրապետելու հմտության մշակում: Միջոցները՝ նախապատրաստական վարժություններ առանց դորժիքների, վարժություններ փայտերով, գնդակով, ծանր գընդակներով (մեղիցին բոլերով), վարժություններ շվեդական պատի և շվեդական նստարանի վրա. համակցված ազատ շարժումներ:

ՅԵՐԵՐԵՐԴ — հիմնական մաս (20—26 րոպե).

Կիրառական ունակությունների ուսումնասիրություն, շարային պատրաստություն, մարզանք սպորտի բոլոր տեսակներում, ունակությունների կիրառումը բարդացրած պայմաններում: Միջոցներ՝ քայլք, վազք, նետում, մագլցելով անցնելը, ցատկեր, հավասարակշռություն, վարժություններ գործիքների վրա, շարժական խաղեր և այլն:

ԶՈՐ ԲՈՐԴ — ավագ տական մասը (2—3 րոպե). պարապողների որգանիզմը հանգիստ վիճակի բերելը և նրանց կազմակերպումը հետևյալ պարագամումքի համար: Միջոցներ՝ հանգիստ քայլք, հանգստացնող վարժություններ:

Դասի տևողությունն ե 45 րոպե:

Ֆիզիկական կուլտուրայի բոլոր դասերին և պարապմունքներին շարժածքների, շարափոխությունների, շարժումների, դարձումների և այլոց ժամանակ պետք ե զեկավարվել ԲԳԿԲ ՀԵՏԿԵ-ԿԻ շարային կանոնագրքի համապատասխան հոդվածներով:

6. Ֆիզիկական դաստիարակության հաջող հետևանքների կարելի յե համեմ միայն ուսումնական պարագամունքների և մասսայական ֆիզկուլտուրային աշխատանքի կանոնավոր զուգացման դեպքում: Դրա համար անհրաժեշտ ե դպրոցում կազմակերպել ֆիզկուլտուրային կուեկտիվ սպորտի զանազան տեսակի սեկցիաներով, ՅԵՊԱՊ-ի նորմաների հանձնում, սպորտային տոնակատարություններ, մրցակցություններ և այլն:

7. Ծրագրային նյութի յուրացումը տարվա յուրաքանչյուր քառորդում ստուգիլում ե ընթացիկ հաշվառման միջոցով և հատուկ կոնտրոլ վարժություններով: (Հավելված № 4):

8. Մարմնամարզության և խաղերի վարժությունների նկարագրությունը տրվում ե սովորողների ֆիզիկական դաստիարակության ծրագրային նյութի մեջ, վոր մշակված ե ԽՍՀՄ ԺԿԿ-ին կից ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի Համամիութենական կոմիտեյի կողմից և հրատարակվում ե միութենական հանրապետությունների լուսժողկոմատների կողմից:

5-ԲԴ ԴԱՍԱՐԱՐԱՆ (85 ժամ)

ՇԱՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆՀԱՄԱԿԱՆ պատրաստությունն առանց գենքի: Հիմնական կեցվածքը («շարպիր», «հավասար»,

«Դպասու»: «Ազատ», «Չտկվիր» հրամանների կատարումը: Դարձումներ տեղում: Շարժումներ քայլով և վազով: Քայլի նշանաւարումը տեղում և «առաջ» հրամանի կատարումը: Շարժման գանդ առումը: Շարժման արագության փոփոխումը: Վողջունում տեղում և շարժման ժամանակ:

Զեռնարկ. ԲԳԿԲ Հետեակի շարային կանոնագիրք, Հոդ. 25—27, 30—34, 36—39, 123—124:

2. Պատրաստություն շոկի կազմում առանց զեռնարկի: Զոկի միավազան և յերկտողան յերկայնած շարքերը: Հավասարում: Մեկ ու յերկու և համարների կարգով համրելը: Զոկի դարձումները տեղում: Շարքից դորս դալը և շարքի վերադառնալը: Շարժում քայլով և վազով: «Յրվիր» հրամանի կատարումը:

Զեռնարկ. ԲԳԿԲ Հետեակի շարային կանոնագիրք, Հոդ. 104—108, 110, 125—126:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅՈՒՆ

1. Մարմնամարզական շարափակություններ: Քառաշար սյան շարվածքը տարաբաժանումներով: Քառաշար սյան փակումը և բացումը մեկնած ձեռքի հետավորությամբ առդրովի քայլերով և վազով:

2. Նախապատրաստական վարժություններ անհատական մարմնամարզության համար: Վարժություններ մարմնի բոլոր մասերի համար՝ առանց կործիքների, շվեդական պատի վրա, զնդակով և ծանր զնդակով (մեղքուերով) մինչև $1\frac{1}{2}$ կգ քաշով, վոստյուններ առանց ցատկապարանի և կարճ ցատկապարանով:

3. Քայլք և վազք: Քայլի և վազքի տարրեր տեսակները: Անդոդատ վազք մինչև 2 րոպե: (Համելված № 5):

4. Յատկեր: Հենացատկեր (բում, գերան, պլինթ, ձի, իշուկ—մինչև 110 սմ): Վերցատկեր գործիքների վրա, դարձումներ և վերցատկեր զանազան գրություններից.

Ազատ (առանց հենգելու) ցատկեր ըստ բարձրության վազքով պարանի և կոշտ արգելքների վրայով:

5. Մագլցում (ուղղագիծ պարան, ձող): Մագլցում յերեք նվագ՝ տղաները— 3 մետր, աղջիկները— 2 մ:

6. Սողում չորեքթաթ (ձնկերի և ձեռքերի դաստակների վրա) և կիսաշորեքթաթ (ձնկերի և նախաբազուկների վրա):

7. Հավասարակշռություն (գերան, մինչև 120 սմ. բարձրությամբ): Տեղաշարժում զանազան յեղանակներով, ձեռքերի տարեկ գրությամբ:

8. Ծանրության բարձրացում և տեղափոխում: Զանազան ծանրությունների բարձրացում և տեղափոխում հետեւյալ քաշով՝ տղաները— մինչև 6 կգ. և աղջիկները— մինչև 5 կգ.: Տեղափոխման յեղանակները՝ չորս հոգով, յերկու հոգով:

9. Ակրոբատիկ վարժություններ: Գլխիոնձիներ դեպի առաջ և յետ:

10. Վարժություններ՝ մարմնամարզական գործիքների վրա: Կախեր խառը, հենումներ, վարցատկեր զանազան գրություններից (բարձր բում, տարրեր բարձրությամբ զուգափայտեր):

ԽԱՂԵՐ

Խաղեր՝ վազքով, ցատկերով, նետումով, բռնումով, մագրեցումով, հավասարակշռությամբ, զանազան վարժությունների կոմբինացիայով, վորոնք նպաստում են լսողության, ուշադրության և դիտողականության զրգացմանը:

ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿՈ

1. Վազք կարճ հեռակայություններով: Հարվածային և թափային քայլ: Դանդաղ խմբական վազք ըստ տոկունության՝ տղաները— մինչև 400 մ., աղջիկները— մինչև 300 մ.:

2. Նոնակի նետում 250 գր. քաշով՝ տեղից, վազքից հետեւյալ հեռավորությամբ՝ տղաները— 25 մ., աղջիկները— 15 մ.:

3. Յատկեր ըստ բարձրության վազքից՝ տղաները— 90 սմ., աղջիկները— 80 սմ. կոշտ արգելքների վրայից 40—45 սմ. բարձրությամբ:

Յատկեր ըստ յերկարության՝ տղաները— 250 սմ., աղջիկները— 230 սմ.: Յատկեր խրամատի, առվի վրայից հետեւյալ լայնությամբ՝ տղաները— մինչև 1,5 մետր, աղջիկները— մինչև 1 մետր:

ԹԵՌԻՒՄ

Անձնական սանմինիմում ՅԵՊԱՊ-ի ծավալով:

ԴԱՀՈՒԿԱՆԵՐ

Դահուկաների ընտրությունը և հարմարեցումը, փոփոխակի ընթացքի տեխնիկան, վայրեջքներ, դարձումներ: Հեռակայությունը՝ տղաները — 2 կմ. 20 րոպեյով, աղջկները — 1 կմ. 12 րոպեյով:

ԼՈՂ

«Կոռլ» յեղանակի ուսումնասիրություն: Լողալ մինչև 15 մետր: 6-րդ ԴԱՍԱՐԱՆ (80 ժամ)

ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Անհատական պատրաստություն առանց գենքի: «Պակիր», «Վեր կաց» հրամանների կատարումը: Դարձումներ շարժման ժամանակ:

Զեռնարկ. ԲԳԿԲ Հետեակի շարային կանոնագիրք, Հոդ. 28—29, 41—43:

2. Պատրաստություն զոկի կազմում առանց գենքի առաջնական գույքի: Հոգի բացումն ու փակումը քայլով և վազով: Շարժում և դարձումներ շարժման ժամանակ:

Զոկ, պառկիր, ջոկ, վեր կաց հրամանների կատարումը: Ուղղության փոխումը թիվ վրա շրջումով և նոր ուղղությամբ, շարվելով: Շարափոխություններ յերկառողան շարքից միատողան շարքի և ընդհակառակը: Շարքում վողջունելու համար հրամանների կատարումը:

Զեռնարկ. ԲԳԿԲ Հետեակի շարային կանոնագիրք, Հոդ. 111—118, 126:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅՈՒՆ

1. Մարմնամարզական շարափոխություններ: Շարափոխություններ միաշար սյունից քառաշար սյան, բացումը, փակումը առգրովի քայլերով, ցատկումներով:

2. Նախապատրաստական վարժություններ: Մակար ազատ շարժումների կոմբինացիա: Վարժություն մարմնի բոլոր մասերի համար՝ առանց գործիքների, շվեդական պա-

տի վրա, մանր գնդակներով և մինչև 2 կգ. ծանր գնդակներով: 3. Քայլք և վազք: Քայլքի և վազքի տարատեսակությունները: Անընդհատ վազք մինչև 3 րոպե: (Հավելված № 5):

4. Ցատկեր. Հենացատկեր (պլինթ, իշուկ, գերան, բում՝ բարձրությունը 110 սմ.), վերցատկեր գործիքների վրա և վարցատկեր գրանցից, բարդացումներով:

Յատկ ըստ յերկարության և բարձր-ձեռու ցատկ, ցատկ «պատռհանի» միջով:

Կախովի ցատկ ճոպանից բարձրացող պարանի վրայով:

5. Մագլցում: Ուղղաձիգ ձողով, պարանով յերեք նվազ տղաները — 5 մ, աղջկները — 2,5 մետր:

6. Սողումներ: Կիսաշորեթաթ (ծնկների և նախարարությունների վրա):

7. Հավասարակշռություն: Քայլք 1 մետր բարձրությամբ գերանի վրա, դարձումներ, քայլք ծանրություն վերցրած՝ աղջկները — մինչև 3 կգ., տղաները — մինչև 5 կգ.: Միմյանց ճանապարհ տալը մինչև 50 սմ բարձրության վրա:

8. Ծանրություն բարձրացնելը և տեղափոխելը: Ծանրություն բարձրացնելը և իջեցնելը՝ տղաները — մինչև 8 կգ., աղջկները — մինչև 6 կգ.: Տեղափոխում յերկու հոգով «պատգարակ», «բազկաթոռ» յեղանակներով:

9. Ակրոբատիկ վարժություններ: Գլխկոնձիններ դեպի առաջ, կարճ, կանգնվածք թիակների վրա:

10. Վարժություններ մարմնամարզական գործիքների վրա: Ցածր ողակներ՝ կախեր, մի տեսակի կախերից, մյուսներին անցնելը: Բարձր ողակներ՝ թափահարում, վերձգումներ կախված վիճակում, վայրցատկ: Ցածր պտտաձող՝ հենումից կախի անցնելը, կախից ծնկատակից կախվածքի անցնելը: Զուգափայլության ցածր՝ նստումներ և հենումներ, վարցատկեր:

ԽԱՂԵՐ

Խաղեր վազքով, ցատկերով, նետումներով և բռնումներով, ճապացումով, հավասարակշռությամբ:

ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿԱ

1. Վազք ըստ արագության 60 մետր:

2. Դանդաղ խմբական վազք ըստ տոկունության՝ տղաները—մինչև 500 մ, աղջիկները—մինչև 400 մ:

Նոնակի նետում. տղաները—400 գր, աղջիկները—250 գր. տեղից և քայլից՝ տղաները—22 մ, աղջիկները—17 մ: Ողակով գնդակի նետում:

Յատկեր ըստ յերկարության՝ տղաները—280 սմ., աղջիկները—250 սմ.:

Յատկեր ըստ բարձրության վազքից՝ տղաները—100 սմ., աղջիկները—85 սմ.:

ԹԵՌԻՒՄ

Առաջին ոգնություն ՅԵՊԱՊ-ի ծավալով:

ԴԱՀՈՒԿՆԵՐ

Փոփոխակի (ռուսական) ընթացքի ուսումնասիրություն: Միաժամանակյա միաքաղաք, յերկայլ (ֆիննական) ընթացք: Քայլք հեռակայությամբ՝ տղաները—2 կմ. 18 րոպեյում, աղջիկները—2 կմ. 22 րոպեյում: Վայրեջքեր, դարձումներ, վերելքներ:

ԼՈՂ

«Բրասս» յեղանակի ուսումնասիրություն:

7-րդ ԴԱՍՍ.ԲԱՆ (80 ժամ)

ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Անհատական պատրաստություն մաքետ-ը եռացացանց է բոլոր աշխատանքներ: Հիմնական կեցվածք: Շարժում: Կանգառումներ: Գարձումներ տեղում և շարժման ժամակ: «Ուսիդ առա», «վոտքիդ», «ձեռքիդ» ձեռքի տեխնիկայի մշակում: Պետին մոտենալը «ուսիդ առա» հրացանով: Վողզումնումներ գենքով: «Պառկիր», «վեր կաց», «ազատ» հրամանների կատարում: Վազելազքեր դեպի առաջ, դեպի կողմերը և դեպի լեռ: Վազելազքեր կուցած դրությամբ:

Սողում պլաստունաբար և կիսաշորեքթաթ:

Զենարկ. ԲԳԿԲ Հետեւակի շարային կանոնագրքից, Հոդ. 44—46, 52—58, 60—61, 64—67:

2. Պատրաստություն շոկի կազմում մաքետ-ը եռացանց առաջացանց է բոլոր աշխատանքների: «Զենքը դնել», «Զոկ զենքի մոտ», «Զոկի ի զենք» հրամանների կատարում:

Զոկի յերթային շարքեր՝ միաշար սյուն, զուգաշար սյուն:

Շարժում և շարափոխություններ: Մյան շարժման ուղղության փոխում: Զոկի բացումը և փակումը շարժման ժամանակ:

Զենարկ. ԲԳԿԲ Հետեւակի շարային կանոնագրքի, Հոդ. 119, 121—122, 127—129:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅՈՒՆ

1. Մարմնամարձություն շարափոխություններ: Շարափոխություններ միաշար սյունից քառաշար, հնգաշար սյան զոկերի դարձումով քայլելու ժամանակ: Շարքի բացում և փակում:

2. Նախապատրաստական վարժություններ: ՅեՊԱՊ-ի լիցե: Վարժություններ մարմնի բոլոր մասերի համար՝ առանց գործիքների, շինուական պատի վրա, գնդակով, ծանր գնդակներով, վոստուններ (ցատկապարան):

3. Քայլք և վազք: Քայլքի և վազքի զանազան յեղանակները: Անակնկալություններ: Վազք մինչև 4 րոպե: (Հավելված № 5):

4. Ցատկեր (պլինթ, իշուկ, ձի, բարձրությունը—110 սմ), ցատկ վոտեները ծալած, բարձր-խոր ցատկ:

5. Մագլցում և մագլցելով ան ելը: Կախված միճակում պարանով իր վոտեները կապել «ութնյակածեա», «ողակածեա»: Պատի (ցանկապատ) վրայից մագլցելով անցնելը:

6. Սողում: Պլաստունների յեղանակով (ձեռքերի տարածամանակ և միաժամանակ աշխատանքով):

7. Հավասար արակ շուրջուն: Քայլք գերանի վրա (բարձրությունը մինչև 120 սմ), ծանրություն վեցրած՝ տղաները—մինչև 5 կիլոգրամ, աղջիկները—մինչև 3 կգ: Քայլք ձեռքերի շարժումներով:

8. Ծանրություն բարձրացում և տեղափոխում: Տեղափոխման յեղանակները՝ «բազկաթոռ», «տաբուրետ»:

9. Ակրոբատիկ կաշություններ: Գլխկոնձիններ դեպի առաջ, յետ, կանգնվածք գլխի վրա, հենվելով ձեռքերին (աղջիկները—կանգնվածք թիակների վրա):

10. Վարժություններ մարմնամարզական դորձիքների վրա: Պտտածող ցածր, կախեր ծնկատակից, վերելքներ, հեծած նստումներ: Բարձր ողակներ. կախ ծալված և

այդ գրությունից արտածալված կախի անցնելը: Զուգափայտ ցածր (տղաներ). Հենումներ, մի տեսակի հենումնից այլ հենման անցնելը, նստումներ, վարցատկ անկյունով: Զանազան բարձրությամբ զուգափայտեր (աղջիկներ). Կախ պառկած, թափանցներ, նստումներ, արաբեսկաներ: Կախովի ցատկեր և հենացատկեր: Ցատկեր բարձր ողակներից կծկված պարանի վրայով:

Խ Ա Ղ Ե Բ

Խաղեր վաղքով, նետումներով, գնդակի յետ մղումով, դիմադրությամբ, նետումը, բոնումը, հավասարակշռությունը, ցատկերը համակցելով:

Թ Ե Թ Ե Վ Ա Տ Լ Ե Տ Ի Կ Ա

Վագք ըստ արագության 60 մետր:

Վագք ըստ տոկունության՝ տղաները — 1000 մետր, աղջիկները — 500 մ.:

500 գր. նոնակի նետում՝ տղաները — 25 մ., աղջիկները — 15 մ., նոնակի նետում ծածկաբանի յետեր: 3—4 կգ. գնդի հրում տեղից:

Ցատկեր ըստ բարձրության վաղքից՝ տղաները — 105 սմ, աղջիկները — 90 սմ: Ցատկեր ըստ յերկարության վաղքից՝ տղաները — 3 մ. 20 սմ., աղջիկները — 2 մ. 80 սմ.:

ԹԵՌԻՒՄ

ՅԵՊԱՊ-ի կոմպլեքս:

ԴԱՀՈՒԿՆԵՐ

Քայլք քիչ կտրուկ վայրում՝ տղաները — 3 կմ. 24 րոպեյում, աղջիկները — 2 կմ. 20 րոպեյում:

Վայրեցք սարից զանազան կանգնվածքներով: Արգելակում: Վերելք «սանդղաձեւ»: Դարձումներ ցատկով:

ԼՈՂ

«Բրասս» յեղանակի ուսումնասիրություն: Ցատկեր ջուրը վոտ-ները ցածր մինչև 2 մետր բարձրությունից:

ՀՐԱՋԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հրաձգային պատրաստությունը նպատակ ունի սովորողներին գիտելիքներ տալ դենքի (հրացանի, նոնակի) նյութական

մասի մասին, հիմնական տեղեկություններ հրաձգության մասին և սովորեցնել նրանց արագ և հմտորեն կատարել բոլոր ձևերը փոքրակալիքը հրացանով դիպուկ նշանոցային ձիգ կատարելու համար:

2. Հրաձգային պարապմունքներն իրենց բովանդակությամբ, վորպես կանոն, պետք ե բաղկացած լինեն.

ա) առաջիկա հրաձգության նախապատրաստական վարժությունների մշակումից (հրաձգության պատրաստվելը, նշանառություն, նշանակետի ընտրություն, հրահանի իշեցում և այլն);

բ) հաստոցից նշանառություն կատարելու միատեսակության մարզանքից:

